ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԱՊՁԲ-20-7/18-1

ք. Երևան 14 ՕՀ. 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Էլաամոդա» ՍՊԸ -ը, ի դեմս տնօրեն Է. Հովսեփյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Ստանալ ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 16263000 (տասնվեց միլիոն երկու հարյուր վաթսուներեք հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[17] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

[17] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է **15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ:**

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի

20

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

---

[21] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Էլաամոդա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ք. Երևան, Զավարյան 57/1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	"Յունիբանկ" ՓԲԸ, Մալաթիա մասնաճյուղ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 24105020675400
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00889965
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Է. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-7/18-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1,2. <u>Գլխարկ՝ կիսաբրդյա (հատ)</u> ГОСТ -16980-82, կիսաբրդյա գլխարկը կազմված է ճակատամասից, գլխարկահատակից, գլխարկաբոլորքից, լաքապատ հովհարից և մետաղի պարունակություն ունեցող թելով գործված ոսկեգույն հյուսապարանից: Գլխարկահատակի և գլխարկաբոլորքի վերին եզրով անցնում է 2մմ լայնքով կարմիր մահուդից երիզ: Ներսից գլխարկահատակի եզրագծով տեղադրվում համապատասխան չափսի զսպանակատիպ մետաղյա ժապավեն: Հովհարի վերնամասում, գլխարկաբոլորքին երկու ոսկեգույն կոճակով ամրացվում է ոսկեգույն հյուսապարանը: Գլխարկահատակը և ճակատամասը 2381 արտիկուլի կիսաբրդյա դեղնականաչավուն գույնի գործվածքից, գլխարկաբոլորքի գործվածքը 2481/2581 ԻԱ արտիկուլի դեղնականաչավուն գույնի մահուդից, էլեկտրոստվարաթղթե ներդիրով և 3,5 սմ լայնքով արհեստական կաշվե շրջանակով: Հովհարը հավաքովի է, սև գույնի արտաքինից լաքապատ, իսկ ներսամասը՝ սև գույնի թավշյա գործվածքից: Գլխարկը ներսից պատված է ГОUS-20272-2014 8-С5-ВШ արտիկուլի դեղնականաչավուն աստառով: Գլխարկագագաթի բարձրությունը գլխարկաբոլորքի վերին եզրից 8,5-9սմ՝ կախված գլխարկի չափսերից: Գլխարկաբոլորքի բարձրությունը 4,8-5,2սմ: Սկսած 53 չափսի գլխարկից, գլխարկահատակի տրամագիծը պետք է լինի 29,5 սմ՝ հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 3մմ: Հյուսապարանի ամրացման ոսկեգույն 14 մմ կոճակը՝ ալյումինի համաձուլվածքից է, ՀՀ ԶՈՒ զինանշանի պատկերով: Գլխարկահատակի վրա ներսի կողմից կարվում է 10սմ երկարության և 6սմ լայնության չափսերից ոչ պակաս, արհեստական կաշվից պիտակ, որի վրա նշվում է արտադրող կազմակերպության անվանումը և գլխարկի չափը: Մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացվի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Փաթեթավորումը՝ եռաշերտ ծալքավոր ստվարաթղթե արկղերով, մեկ արկղի մեջ՝ մինչև 20 հատ: Արկղերը՝ պիտակավորված: Պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Շեղումները՝ ըստ ГОUS-ի: Անհրաժեշտության դեպքում, պատասխանատու ստորաբաժանման պահանջով, ներկայացվի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:

<u>Չափսի սանդղակ</u>

Չափս	53	54	55	56	57	58	59	60	61	62	Ընդամենը %
Ընդամենը %	2	5	15	29	34	10	2	1	1	1	100

3. <u>Գլխարկ՝ կիսաբրդյա սև գույնի (հատ)</u> ГОСТ -16980-82, կիսաբրդյա գլխարկը կազմված է ճակատամասից, գլխարկահատակից, գլխարկաբոլորքից, լաքապատ հովհարից և մետաղի պարունակություն ունեցող թելով գործված ոսկեգույն հյուսապարանից: Գլխարկահատակի և գլխարկաբոլորքի վերին եզրով անցնում է 2մմ լայնքով կարմիր մահուդից երիզ: Ներսից գլխարկահատակի եզրագծով տեղադրվում համապատասխան չափսի զսպանակատիպ մետաղյա ժապավեն: Հովհարի վերնամասում, գլխարկաբոլորքին երկու ոսկեգույն կոճակով ամրացվում է ոսկեգույն հյուսված պարանը: Գլխարկահատակը և ճակատամասը 2381 արտիկուլի կիսաբրդյա սև գույնի գործվածքից, գլխարկաբոլորքի գործվածքը 2481/2581 ԻԱ արտիկուլի սև գույնի մահուդից, էլեկտրոստվարաթղթե ներդիրով և 3,5 սմ լայնքով արհեստական կաշվե շրջանակով: Հովհարը հավաքովի է, սև գույնի արտաքինից լաքապատ, իսկ ներսամասը՝ սև գույնի թավշյա գործվածքից: Գլխարկը ներսից պատված է ГОUS-20272-2014 8-С5-ВШ արտիկուլի սև գույնի աստառով: Գլխարկագագաթի բարձրությունը գլխարկաբոլորքի վերին եզրից 8,5-9սմ՝ կախված գլխարկի չափսերից: Գլխարկաբոլորքի բարձրությունը 4,8-5,2սմ: Սկսած 53 չափսի գլխարկից, գլխարկահատակի տրամագիծը պետք է լինի 29,5 սմ՝ հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 3մմ:
Հյուսապարանի ամրացման ոսկեգույն 14 մմ կոճակը՝ ալյումինի համաձուլվածքից է, ՀՀ ԶՈՒ զինանշանի պատկերով: Գլխարկահատակի վրա ներսի կողմից կարվում է, 10սմ երկարության և 6սմ լայնության չափսերից ոչ պակաս արհեստական կաշվից պիտակ, որի վրա նշվում է արտադրող կազմակերպության անվանումը և գլխարկի չափը: Մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացվի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար:
Փաթեթավորումը՝ եռաշերտ ծալքավոր ստվարաթղթե արկղերով, մեկ արկղի մեջ՝ մինչև 20հատ: Արկղերը՝ պիտակավորված: Պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Շեղումները՝ ըստ ГОUS-ի: Անհրաժեշտության դեպքում, պատասխանատու ստորաբաժանման պահանջով, ներկայացվի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:

<u>Չափսի սանդղակ</u>

Չափս	53	54	55	56	57	58	59	60	61	62	Ընդամենը %
Ընդամենը %	2	5	15	29	34	10	2	1	1	1	100

6. <u>Պիլոտկա՝ կիսաբրդյա սև գույնի (հատ)</u> Գույնը սև, 2311 արտիկուլի կիսաբրդյա գործվածքից: Պիլոտկան կազմված է հատակից, պատերից և կողերից: Ծալվածքի բարձրությունը առջևում 7 սմ, հետնամասը 6 սմ ընդհանուր բարձրությունը կենտրոնում 12սմ՝ առաջամասում 9,5 սմ և հետնամասում 10սմ: Առաջամասում կարվում է ռազմական ոստիկանության տարբերանշանը: Վերծալված եզրակարերին դրվում է կարմիր գույնի մահուդից երիզ, հատակը, պատերը և կողերը կիսաբրդյա կտորից: Պիլոտկայի վերևի կենտրոնական մասում պետք է լինի 3-ական օդափոխիչ, մետաղյա 4մմ տրամագծով անցքեր: Պիլոտկայի ներսի կողմից դրվում է ГОUS- 20272-2014 8-С5-ВШ արտիկուլի սև գույնի աստառ և արհեստական կաշվից 2,5 սմ լայնքով շրջանակ: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումները՝ 2%: Մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացվի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար:

Փաթեթավորումը՝ եռաշերտ ծալքավոր ստվարաթղթե արկղերով, մեկ արկղի մեջ՝ մինչև 50հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 10 հատ: Արկղերը՝ պիտակավորված: Պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Անհրաժեշտության դեպքում, պատասխանատու ստորաբաժանման պահանջով, կներկայացվի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:

Չափսի սանդղակ

Չափս	53	54	55	56	57	58	59	60	61	62	Ընդամենը %
Ընդամենը %	2	5	15	29	34	10	2	1	1	1	100

9. **Գլխարկ՝ ձմեռային ամենօրյա, բնական կարակուլից /հատ/** - Գլխարկը բաղկացած է լաքապատ կոշտ հովհարից, կողամասերից, հատակից, կարակուլե մորթուց ականջակալներից և մետաղի պարունակություն ունեցող ոսկեգույն թելով գործված երկհանգույց հյուսապարանից: Հովհարը սև գույնի, արտաքինից լաքապատ, իսկ ներսամասը՝ սև գույնի թավշյա գործվածքից: Հովհարի ներսից տեղադրվում է 2-3մմ հաստության պլաստմասայե միջադիր: Հովհարի լայնությունը 5 սմ: Գլխարկաբոլորքի ներքնամասում ամբողջ շրջագծով արտաքինից մշակված է 2սմ լայնության երիզ, որի վրա դիմային մասում, ականջակալների տակ եզրերից ամրացվում է հյուսապարանը՝ 14մմ տրամագծով պաշտպանական գույնի պլաստմասայե կոճակներով, հյուսապարանների հանգույցների հեռավորությունը ականջակալների եզրից 4 սմ հեռավորության վրա: Գլխարկի երեսացուն կարվում է 2381 արտիկուլի դեղնականաչավուն կիսաբրդյա գույնի գործվածքից և մոխրագույն ազնվացեղ կարակուլե բնական մորթուց: Գլխարկաբոլորքի առջևի կենտրոնական մասի մեջտեղում ամրացվում է ալյումինե համաձուլվածքից օվալաձև ոսկեգույն գլխարկանշան՝ 32 ճառագայթով:

Կենտրոնական մասը ՀՀ եռագույն դրոշի գույներով շերտագծերից՝ վրայից ոսկեգույն հնգաթև աստղ:

Ներսամասը մգդակարվում է 5սմ կողմերով շեղանկյունաձև՝ ԳՕՍՏ-20272-2014 8-C5-ԲԱ արտիկուլի դեղնականաչավուն աստառով: Տաքացվող ներդիրը ներսից մշակվում է ամրացնող շերտերով և 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով: Գլխարկաբոլորքի բարձրությունը 9սմ: Հետնամասի մորթու լայնությունը մեջտեղում՝ 8,5 սմ: Ականջակալների եզրերը ամրացվում են գլխարկահատակին կիպ: Ականջակալների գլխարկահատակին ամրանում են սև գույնի քուղերով: Գլխարկահատակին, ականջակալների միացման տեղում համապատասխանաբար մշակվում են 4-5 մմ տրամագծով մետաղական անցքեր:

Գլխարկի ներսում աստառի վրա ճակատային մասի մեջտեղում կարվում է 5,5 x 5 սմ չափսի արհեստական կաշվե պաշտպանիչ շերտ: Գլխարկահատակի կենտրոնում ներսից դրոշմվում է շեղանկյուն դրոշմ, որի վրա արտացոլվում է գլխարկի չափսը, արտադրման տարեթիվը և արտադրող կազմակերպության անվանումը: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումները՝ 2%: Արտաքին տեսքը համաձայն հավելված 3-ի: Պատվիրատուի կողմից առնվազն մեկ ամիս շուտ տրամադրվում են չափսերի վերաբերյալ տեղեկատվություն:

Փաթեթավորումը՝ տեսականին գործարանային տուփերով, տուփի մեջ՝ 1 հատ, գլխարկի ներսից գլխարկաբոլորքի լայնքով տեղադրվում է ստվարաթղթե օղակ, գլխարկը չճմրթելու համար: Տուփերի վրա պետք է տպագրված լինի արտադրանքի անվանումը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, քանակը, արտադրման տարեթիվը: Պատվիրատուի պահանջով յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար կներկայացվի, գործվածքի բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն

10. <u>Կոստյում՝ կիսաբրդյա, տոնական կապույտ գույնի, երկնագույն երիզով (լրակազմ)</u> ՏՍ 858-5300-2005: Կիսաբրդյա կոստյումը բաղկացած է կիտելից և ազատթող տաբատից: Կիտելը բաղկացած է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Լանջափեշերը կոճկվում են չորս, ՀՀ ՋՈՒ զինանշանի պատկերով 22 մմ ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից կոճակներով: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները (գրպանների կափույրներ, օձիք) նույնպես կրկնակարվում են սոսնձող կտորով: Լանջափեշերի վրա վերևից մշակվում են ուղղահայաց կենտրոնական ծալվածքով վրադիր գրպաններ, գրպանների ձևավոր կափույրները կոճկվում են մեկական, ՀՀ ՋՈՒ զինանշանի պատկերով 14 մմ ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից կոճակներով, իսկ կողքերից՝ կտրվածքով, կափույրներով գրպաններ: Մեջքի ներքևում, կենտրոնից բացվածքով: Օձիքը ծալովի, օձիքի միացման կարում մշակված է կախիչ՝ թևերը ներկարված: Աստառը՝ ԳՕՍ-20272-2014 8-Ս5-ԲՇ արտիկուլի կապույտ գույնի գործվածքից: Ձախ լանջափեշին ներսամասից մշակվում է կտրվածքով ծոցագրպան:

Ազատթող տաբատը կազմված է առաջամասից, հետևամասից և գոտուց: Առաջամասը՝ կողային գրպաններով: Աջ հետևամասում կտրված գրպան՝ կափույրով: Գուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին կամրջակներով, գոտեփոկի անցկացման համար, կամրջակներից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետնամասի միացման կարի վրա: Կողային կարերում անցկացվում է 1,5-2 մմ լայնության 2481/2581 ԻԱ արտիկուլի երկնագույն գույնի մահոտից երիզներ: Առաջամասում, մինչև ծնկները մշակվում է ԳՕՍ-20272-2014 8-Ս5-ԲՇ արտիկուլի կապույտ գույնի գործվածքից աստառ:

Կոստյումը՝ 2311 արտիկուլի կիսաբրդյա կապույտ գույնի գործվածքից, 317 գրամ մակերեսային խտությամբ՝ 67% բրդի և 33% պոլիէսթեր բաղադրության: Արտադրվում են 46/2 մինչև 64/6 չափս-հասակի: Կիտելի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը, ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ:

Փաթեթավորումը՝ -եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ մինչև 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 լրակազմ: Արկղերի չափսերը՝ լայնությունը 40սմ, բարձրությունը 20սմ և երկարությունը՝ 80սմ (շեղումները 2%): Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, քանակը, արտադրման ամիսն ու տարեթիվը, տեխնիկական պայմանի համարը: Մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանմանը կներկայացվի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Շեղումները՝ ըստ տեխնիկական պայմանի:

Անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար կներկայացվի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:

Չափս-հասակային սանդղակ

Կրծքավանդակի շրջագիծը / Հասակ	46	48	50	52	54	56	58	60	62	64	Ընդամենը %
2	0.4	2	2	1							5.4
3	1	14	15	10	4	1	0.5				45.5
4	0.6	6	8.5	10	5.5	3	2	0.5	0.5	0.2	36.8
5		1	1	2	2	1.7	1.3	0.4	0.4	0.2	10
6			0.5	0.5	0.5	0.3	0.2	0.1	0.1	0.1	2.3
Ընդամենը %	2	23	27	23.5	12	6	4	1	1	0.5	100

12. <u>Կոստյում՝ տոնական, կիսաբրդյա սև գույնի (լրակազմ)</u> ՏՄ 858-5300-2005: Կիսաբրդյա կոստյումը բաղկացած է կիտելից և ազատթող տաբատից: Կիտելը բաղկացած է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Լանջափեշերը կոճկվում են չորս ՀՀ ՀՈՒ զինանշանի պատկերով 22 մմ ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից կոճակներով: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում նաև վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները (գրպանների կափույրներ, օձիք) նույնպես կրկնակարվում են սոսնձող կտորով: Լանջափեշերի վրա վերևից մշակվում են ուղղահայաց կենտրոնական ծալվածքով վրադիր գրպաններ, գրպանների ձևավոր կափույրները կոճկվում են մեկական ՀՀ ՀՈՒ զինանշանի պատկերով 14 մմ ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից կոճակներով, իսկ կողքերից կտրվածքով, կափույրով գրպաններ: Մեջքի ներքևում, կենտրոնից բացվածքով: Օձիքը ծալովի, օձիքի միացման կարում մշակված է կախիչ՝ թևերը ներկարված: Աստառը՝ ԳՕՍՏ-20272-2014 8-Շ5-ԲՇ արտիկուլի սև գույնի կտոր:

Ձախ լանջափեշին ներսամասից մշակվում է կտրվածքով ծոցագրպան:

Ազատթող տաբատը կազմված է առաջամասից, հետևամասից և գոտուց: Առաջամասը կողային գրպաններով: Աջ հետևամասում կտրված գրպան՝ կափույրով: Գուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին կամրջակներով, գոտեփոկի անցկացման համար: Առաջամասում, մինչև ծնկները մշակվում է ՝ ԳՕՍՏ-20272-2014 8-Շ5-ԲՇ արտիկուլի սև գույնի կտորից աստառով:

Կոստյումի երեսացուն՝ 2313 արտիկուլի կիսաբրդյա սև գույնի գործվածքից, 329 գրամ մակերեսային խտությամբ 50% բրդի և 50% պոլիէսթեր բաղադրության: Աստառացուն ներսի կողմից ԳՕՍՏ-20272-2014 8-Շ5-ԲՇ արտիկուլի սև կտորից:

Պատրաստի արտադրանքի վրա կարվում են ուսադիրները և թևքանշանները: Կիտելի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, տեխնիկական պայմանի համարը, ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ:

Փաթեթավորումը՝ - եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ մինչև 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1լրակազմ: Արկղերի չափսերը՝ լայնությունը՝ 40սմ, բարձրությունը՝ 20սմ և երկարությունը՝ 80սմ(շեղումները 2%): Արկղերը պիտակավորված՝ պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանմանը կներկայացվի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար:

Անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար կներկայացվի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:

Պատվիրատուի կողմից տրամադրվում են ուսադիրները, ոսկեգույն 14մմ-անոց կոճակները և թևքանշանները:

Շեղումները՝ ըստ տեխնիկական պայմանի:

13. <u>Բաճկոն՝ գարնանային-աշնանային կիսաբրդյա սև գույնի /սաների համար/ (հատ)</u> Բաճկոնն ունի երկկարանի ներկարված թևքեր, ծալովի օձիք և դարձածալ, օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Հետևամասին և առաջամասին մշակված են վրակարված կոկետկաներ: Առաջամասում մշակված են շերտիկով կողքի գրպաններ: Հետնամասն ունի միջնակար: Բաճկոնի օձիքը կտրված կանգունակով է: Բաճկոնի առաջամասերի և հետևամասերի աստառները փախլավանձև մգդակարված են տաքացնող ներդիրով (սինտեպոն): Թևքերի աստառներին ներդրվում է սինտեպոն: Ձախ առաջամասի աստառին մշակված է շերտիկով ծոցագրպան, որը կոճկվում է օդային օղակով և կոճակով: Բաճկոնը կապվում է 4-4,5սմ լայնության գոտիով, որը անցկացվում է կողքերի կարերում մշակված կամրջակների միջով: Գոտին կոճկվում է պլաստմասե ճարմանդով և գոտու վրա մշակված կամրջակով: Բաճկոնը կոճկվում 4 կոճակօղակներով՝ գաղտնի կոճկվածքով: Լանջափեշի, օձիքի, գոտու, գրպանի, կոկետկաների եզրերը մշակված են 0,1-0,7 սմ լայնությամբ զուգահեռ զարդակարերով: Գաղտնի կոճկվածքը մշակվում է 6 սմ լայնությամբ լայն զարդակարերով: Բաճկոնի երեսացուն սև գույնի, 'Գրետա' տեսակի գործվածքից, 50% բամբակ և 50% պոլիէսթեր բաղադրությամբ: Աստառը ԳՕՍՏ-20272-2014 8-Շ5-ԲՇ արտիկուլի սև գույնի գործվածքից: Բաճկոնի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, ներսի կողմից փակցվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանմանը կներկայացվի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար:

Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ մինչև 5 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Արկղերի չափսերը՝ լայնությունը 56սմ, բարձրությունը 20սմ և

երկարությունը՝ 100սմ: Արկղերը պիտակավորված՝ պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:
Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը՝ 2%:
Անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար կներկայացվի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:
Պատվիրատուի կողմից տրամադրվում են ուսադիրները, ոսկեգույն 14մմ-անոց կոճակները և թևքանշանները:

Ծանոթություն՝ Ներկայացված նմուշները պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատվում կամ մերժվում է ոչ ուշ քան 3 աշխատանքային օրվա ընթացքում:
Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվությանը ներկայացումը պարտադիր չէ:
Մատակարարվող բոլոր ապրանքատեսակները պետք է լինեն նոր, չօգտագործված վիճակում և պետք է մատակարարվեն ՀՀ ՊՆ կենտրոնական իրային բազա (ք. Երևան, Արցախի 61) մատակարար կազմակերպության տրանսպորտով:
10-րդ, 12-րդ, 13-րդ չափաբաժինների համար չափսերի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից, մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի							
չ/հ	անվանումը	չ/մ	քանակը	միավորի գիները (ՀՀ դրամ)	ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	մատակարարումը 2020թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝	
						2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ
1	Գլխարկ՝ կիսաբրդյա	հատ	200	5610	1122000		200
2	Գլխարկ՝ կիսաբրդյա	հատ	300	5610	1683000		300
3	Գլխարկ՝ կիսաբրդյա սև գույնի	հատ	300	5610	1683000		300
6	Պիլոտկա՝ կիսաբրդյա սև գույնի	հատ	300	1740	522000	300	
9	Գլխարկ՝ ձմեռային ամենօրյա, բնական կարակուլից	հատ	180	32100	5778000		180
10	Կոստյում՝ կիսաբրդյա, տոնական, կապույտ գույնի, երկնագույն երիզով	լ-կ	100	34000	3400000		100
12	Կոստյում՝ տոնական, կիսաբրդյա սև գույնի	լ-կ	50	31500	1575000		50
13	Բաճկոն՝ գարնանային-աշնանային, սև գույնի կիսաբրդյա, /ռազմական վարժական/	հատ	50	10000	500000		50

Ծանոթություն՝

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Էլամոդա» ԸՆԿ.
տնօրեն

Է. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-7/18-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Գնման առարկայի											
			Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ., ընդ որում՝								
հ/հ	անվանումը	CPV կոդը	մարտ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Գլխարկներ /Գլխարկ՝ կիսաբրդյա/	18441100/2	1122000	1122000	1122000	1122000	1122000	1122000	1122000	1122000	1122000
2	Գլխարկներ /Գլխարկ՝ կիսաբրդյա/	18441100/4	1683000	1683000	1683000	1683000	1683000	1683000	1683000	1683000	1683000
3	Գլխարկներ /Գլխարկ՝ կիսաբրդյա սև գույնի/	18441100/3	1683000	1683000	1683000	1683000	1683000	1683000	1683000	1683000	1683000
6	Պիլոտկա տեսակի գլխարկներ /Պիլոտկա՝ կիսաբրդյա սև գույնի/	18441140/1	522000	522000	522000	522000	522000	522000	522000	522000	522000
9	Գլխարկներ /Գլխարկ՝ ձմեռային ամենօրյա, բնական կարակուլից/	18441100/8	5778000	5778000	5778000	5778000	5778000	5778000	5778000	5778000	5778000
10	Կիտել և տաբատ /Կոստյում՝ կիսաբրդյա, տոնական, կապույտ գույնի, երկնագույն երիզով/	18231410/2	3400000	3400000	3400000	3400000	3400000	3400000	3400000	3400000	3400000
12	Կիտել և տաբատ /Կոստյում՝ տոնական, կիսաբրդյա սև գույնի/	18231410/4	1575000	1575000	1575000	1575000	1575000	1575000	1575000	1575000	1575000
13	Բաճկոնակներ /Բաճկոն՝ գարնանային-աշնանային, սև գույնի կիսաբրդյա, /ռազմական վարժական//	18231900/4	500000	500000	500000	500000	500000	500000	500000	500000	500000

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Էլամոդա» ՍՊԸ
Տնօրեն

Է. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-20-7/18-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-20-7/18-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն